

Եւրոպահայութիւնը որպէս սփիւոքի մէկ մասնիկը՝ իր մտահոգութիւններով

ԲաՖՖի Պետիկեան

Վերջին տասնամեակներուն եւրոպահայութիւնը ունեցաւ քանակական աճ, միջին արեւելքէն եւ Հայաստանէն արտագաղթի որպէս հետեւանք:

Հայ մարդը եւրոպայի մէջ, ապրելով աշխարհի ամենաժողովրդավար, յառաջադէմ հասարակութեան մէջ, առնելով բարձր կրթութիւն, յաջողելով որպէս անհատ ու վայելելով բարեկեցիկ կեանք, մեր ազգային հաւաքական կեանքը կը գտնուի ցաւալի վիճակի մէջ:

Օրէ օր կաւելնայ թիւը անոնց որոնք հայու անուն կրելով հանդերձ ինքզինքնին հայ չեն նկատեր:

Սպիտակ ջարդը՝ ձուլումը հասած է ահաւոր աստիճանի, մտած է իւրաքանչիւր տունէ եւ անձէ ներս, ներսէն կրծելով, մաշեցնելով հայու հոգին: Եւրոպայի մէջ մեծցող նոր սերունդը գրեթէ չի գիտեր կամ ալ չի գործածէր մեր մայրենի լեզուն:

Բացի այդ, ժողովուրդը օրէ օր կը հեռանայ ազգային մեր հաստատութիւններէն, եկեղեցիէն, միութիւններէն, կազմակերպութիւններէն: Ամենամեծ ախտը անտարբերութիւնն է, հետաքրքրութեան պակասը:

Միջին արեւելքի մէջ մեր աւանդական հաստատութիւնները՝ եկեղեցի, դպրոց, ակումբ, կուսակցութիւններ, միութիւններ կրցան լաւ հայ սերունդ պատրաստել, մեծ մասամբ իսլամ շրջապատի, նաեւ ապրած երկիրներու պետութիւններու թույլտվութեամբ: Ընդհանրապէս ապրելով կեթօսներու մէջ, այլամերժ եւ իրարամերժ:

Այդ աւանդական կազմակերպութիւնները, Եւրոպայի նման բաց, ազատ ու հանդուրժող հասարակութեան մէջ ապրելով, չեն յաջողած ռազմավարութիւն մը մշակել, կեթօսէն դուրս ելլելու, դէպի դուրս բացուելու զուգահեռ, ազգային ինքնութիւնը պահել:

70 տարի զիրար բզկտելէ ետք աւանդական համակարգը մաշած, սպառած, տպաւորութիւն կը թողու, Եւրոպայի մէջ մեծցող նոր սերունդին համար ոչ միայն հմայքէ գուրկ է, այլեւ իր նեղմիտ եւ անհանդուրժող մտածողութեամբ՝ վանողական:

Եւրոպահայութեան ապագան յանձնուած է պատահականութեան, առանց ուղղութեան, առանց ազգային ծրագրի:

Առաջին հերթին ստեղծուած է գաղափարական բաց մը-VACUUM

70 տարի սփիւոքի գաղափարական վիճարկումներու զլխաւոր առանցքը կը կազմէր ազատ անկախ հայաստանի, կամ խորհրդային հայաստանի թեր ու դէմ ըլլալը: Այդ կռուապատճառը մէջտեղէն վերնալէ ետք, մնացած է հայ դատը:

Երկրաշարժը, Արցախեան ազատագրական պայքարը, Հայաստանի անկախացումը, սկիզբը յառաջացուցին ցնցում, զարթոնք եւ խանդավառութիւն, սակայն օրէ օր այդ կորսնցուց իր հմայքը, մարեցաւ խանդավառութեան ալիքը եւ յաջորդեց յուսախաբութիւնը:

Երէկ Իրաքահայութիւնն էր, այսօր Սուրիահայութիւնը որ սփիւռքի գլխաւոր սիւներէն է, քաղաքական իրադարձութիւններու հետեւանքով վտանգուած է:

Սփիւռք կոչուած այս նաւը կը թիավարէ նաւահանգիստէ նաւահանգիստ, կարծես կորսնցուցած ըլլալով իր ուղղութիւնը, իսկ անոր նաւավարները՝ կորսնցուցած են դէկը, այսպիսով այս նաւը օրէ օր աւելի կը նկըղմի....

Այս բոլորը կը դնէ մեզ նոր հրամայականներու առջեւ - Սփիւռքը վերակազմակերպել, վերակառուցել վարէն դէպի վեր - ցամաքամասէ ցամաքամաս, մէկ կողմէն փնտռել, գտնել հայութիւնը համախմբող ամենակարեւոր կէտերը, օգտուելով Սփիւռքի գրեթէ հարիւրամեայ փորձարութենէն եւ արժէքներէն, նոր պայմաններու հիման վրայ մշակել ազգային գաղափարախօսութիւն մը, որ կարենայ ընդգրկել հայութեան մեծամասնութեան հետաքրքրութիւնները, մտածողութիւնը եւ ազգային գերագոյն շահերը, միաժամանակ հարմարելով համամարդկային արժէքներու՝ ժողովրդավարութեան, հանդուրժողականութեան, հակացեղապաշտութեան:

Ամենաառաջ թոթափել, մաքրագերծել նեղմտութեան, իրարամերժութեան թոյնը, քարոզել սէր հայ-հայու հանդէպ, ստեղծելով գօրակից հասարակութիւն մը, Solidargemeinschaft.

Մշակել ազգային ծրագիր մը, կամ ծրագիրներ, նկատի ունենալով իւրաքանչիւր շրջանի, ցամաքամասի պայմանները եւ իւրահատկութիւնները:

Եւրոպան ունի ուրիշ պայմաններ գան միջին արեւելքը, կամ հարաւային Ամերիկան:

Անշուշտ կարելոր հարցադրումը այն է թէ Հայաստանը ունի, Հայաստանի հանրապետութեան սահմաններէն դուրս ապրող հայութեան համար, որ երկու/երրորդը կը կազմէ, մշակուած քաղաքականութիւն մը, եւ ինչ է այդ:

Հայաստանը պատրաստ^օ է օգնել սփիւռքին իր դժուարութիւնները դիմագրաւելու: Մինչ Հայաստանի գլխաւոր հարցը տնտեսական, ընկերային եւ ազգային ապահովութեան հարցերն են, սփիւռքի գլխաւոր հարցը հայ նոր սերունդի ազգային ինքնութեան, դաստիարակութեան հարցն է, որուն գլխաւոր սիւնը հայ դպրոցն է:

Երբ փակուեցաւ Եւրոպահայութեան եւ սփիւռքի ամենակարեւոր կրթական հաստատութիւններէն մէկը, Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութիւնը, ստեղծելով բողոքի մեծ ալիք, եւ նաեւ Կիպրոսի պետութեան միջամտութիւնը, Հայաստանի պետութիւնը մնաց լուռ, անտարբեր: Այստեղ շատ ուրախ պիտի ըլլայինք եթէ Հայաստանի պետութիւնը միջամտէր, փորձէր, օգնէր լուծումներ գտնելու:

Հայ ժողովուրդի գոյատևման գլխաւոր դրամագլուխը հայ նոր սերունդի հայեցի դաստիարակութիւնն է: Հայ դատի գլխաւոր դրամագլուխը Հայ ժողովուրդն է, ոչ թէ այս կամ այն գաղութարար, կայսերապաշտ պետութեան թուղթէ շերեփները:

Այն տպաւորութիւնը վերցնելու համար թէ Հայաստանը սփիւռքէն միայն կուզէ նիւթապէս օգտուիլ, կ'առաջարկեմ Հայաստան հիմնադրամի հաւաքած դրամին կէսը հատկացնել սփիւռքի կրթական, երիտասարդական ծրագիրներու:

Սփիւռք - Հայաստան յարաբերութիւնները պէտք է միակողմանի չ'ըլլան: Հայաստանի գլխաւոր դրամագլուխը զօրաւոր սփիւռք մըն է, եթէ այդ լուծուի, տկարանայ, վնաս է նաեւ Հայաստանի:

Սփիւռք - Հայաստան յարաբերութիւնները պէտք է հիմնուած ըլլան անկեղծութան, թափանցիկութեան, իրար-օգնութեան վրայ, իսկ համագումարը բաց ըլլայ Սփիւռքի եւ Հայաստանի բոլոր հասարակական կազմակերպութիւններուն: